

Պրոֆ. Կ. Մելիք-Ոհանջանյան

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԱՌԻԿ

(ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՆՐՈՒՆՔ)

Մեծանուն գիտնական Մ. Արեղյանի և հմուտ գրաբարդետ Ս. Հարությունյանի աշխատությամբ 1913 թ. լույս ընծայվեց Մովսես Խորենացու Հայոց պատմության քննական տեքստը ընդարձակ ձեռագրաբանական առաջարանով: Այդ հրատարակությունը մի արժեքավոր ներդրում էր մեր տեքստաբանության, պատմագիտության ու հին գրականության մեջ: Մոտ չորս տասնյակ պրնցիպ ու տպագիր օրինակների մանրամասն բաղդատությամբ, հնարավորության սահմաններում վերականգնված են Մ. Խորենացու տեքստի աղճատումները, հապավումներն ու սխալ ընթերցվածները, կարճ ասած՝ կազմված է «Հայոց պատմության» հիմնականում վավերական տեքստը:

Բանասիրությունը հայ և օտար լեզուներով, քննության առնելով այս նոր հրատարակությունը, վեր է հանել այս աշխատության արժանիքները նախորդ հրատարակությունների համեմատությամբ, ինչպես և նշել է մի շարք երկրորդական ընդլիժի թերություններ:

Երեք տասնամյակ անց, չթերադնահատելով այս մանրակրկիտ ու երկարատև աշխատության մեծավանդ արժեքը, ինչպես նաև «Պատմագիրք Հայոց» գիտական-քննական սերիայի ակնառու նշանակությունը, մենք թույլ ենք տալիս մեզ այստեղ նշել մի թերություն ևս, որ հատուկ է մեր նախորդ շրջանի բոլոր հրատարակություններին պատմագրական-բնագրագիտական ուղղությամբ:

Մեր ականավոր բանասերները՝ հրատարակելով մեր նախնիների արժեքավոր պատմագրական երկերը, բաղդատել են դրանց բազմաթիվ դրժագիր օրինակները, կարելի է ասել, ըստ մեծի մասին այն օրինակները, որոնք պարունակել են կամ ամբողջական երկը, կամ նրա մեծագույն, ընդարձակ հատվածները: Հրատարակվող հեղինակների մունր-մունր պատառիկները, որոնք սփռված կան մեր ճառընտիրներում և այլ և այլ ժողովածուներում, կամ բոլորովին աչքաթող են արված, կամ նվազ չափով օղտագործված-բաղդատված: Այն ինչ այդ պատառիկները կամ հատվածները հաճախ կարող են ավելի արժեքավոր հանդիսանալ ավյալ հեղինակի տեքստը վերականգնելու կապակցությամբ, քան նրա երկի մեղ հասած ամբողջական օրինակը:

Անցյալի պատմագիտական-գրական հուշարձանները, պատմության այդ անսպառ աղբյուրները, ձեռագիր վիճակում գտնվող շարունակ սերնդից սերունդ անցնելով, հաճախակի արտագրվելով, որքան շատ, այնքան ավելի փոփոխության են ենթարկվել: Ամեն մի դարաշրջան, յուրաքանչյուր գրիչ յուրովի է ընկալում: Եվ այդ գրական հուշարձանը, «խմբագրելով» նրա տեքստը հապավման և հավելման, ինչպես և վերծանման-մեկնարանման գծով: Հենց դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ միևնույն հեղինակի երկի բովանդակությունը հարասելիս կամ պատմելիս՝ հետագա հեղինակները հաճախ հիշում են այնպիսի հատվածներ ու դեպքեր, որոնք գոյություն չունեն ատկա բնագրի մեջ, կամ ընդհակառակը՝ վերջինս մեջ կան այնպիսի տեղեկություններ, որ ծանոթ չեն ժամանակով տվյալ հեղինակին ավելի մոտ կանգնած մյուս երկասիրողներին: Դեռ ավելին: Հետագա դարերի գրիչները—«խմբագրողները», ընդօրինակելով կամ նորոգելով ավելի հին հեղինակների գրական գործերը՝ շատ հաճախ իրենց դարաշրջանի համար նվազ հասկանալի տեղեկանքներ, բացառությամբ, հենց «արդիականացնում» ըստ ժամանակի հասկացության, կամ սխալ ըմբռնելով՝ սխալ էլ արտագրում են: Այս միջարկություններն ու վերծանությունները հետագայում արտագրվում են, օրինականացվում և վերագրվում տվյալ հեղինակի գրչին: Նման «փոփոխությունները» խաբուսիկ նշանաձևերի դեր են կատարում և թյուրիմաց եզրահանգումների առիթ դառնում, աղարտում ճիշտ կողմնորոշումը քննարկման ենթակա հեղինակի նկատմամբ: Նման օրինակները բազմաթիվ են ու պեճախոս:

Դարձյալ. անցյալի մասնավորապես հին և միջին դարերի սիրված հեղինակների գործերը հաճախ են ընդօրինակվել, իսկ արտագրվելուց հետո հին, քայքայված կամ զովարենթեռնելի օրինակները կամ ոչնչացել են ժամանակի ու անբարենպաստ պայմանների ազդեցությամբ, կամ ոչնչացրել են հենց իրենք ընդօրինակողները, չգալով այլևս հնի կարիքը: Հենց դրանով է բացատրվում այն, որ մեր շատ սիրված հեղինակների երկասիրություններին մենք հին օրինակներ չունենք: Դրանց մեծ մասը գալիս է XVI—XVII դարերից:

Եթե մեր հին ականավոր հեղինակների ամբողջական գործերը հեաին դարերի գրչության, ընդօրինակության են մեզ հասել, ապա նրանց երկասիրություններից զանազան հատվածներ, պատահիկներ պահպանված են մեր ավելի վաղ շրջանի զանազան ժողովածուներում (Ճառնոտի, Ոսկեփորիկ, Տօնական և այլն): Այդ հատուկությունները, բեկորիկները՝ վերարտագրելով ավելի հին և հաճախ ավելի ընտիր ընթերցվածներ, գյուրություն են ընձեռում վերականգնելու տվյալ հեղինակի ժամանակի ընթացքում ազդատված տեքստը՝ մի բան, որ տեքստաբանության մեջ ամենահիմնական նախապայմանն է ու առաջնակարգ նշանակություն ունի:

Տարիների ընթացքում մենք մի շարք նման տեքստաբանական նկատողություններ ու դիտողություններ ենք հավաքել, սակայն այստեղ բավականանում ենք մի երկու մանր դիտողություններով, որոնք վերաբերում են մեր պատմահոր՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» տեքստի երկու հանրահայտ հատվածներին: Դրանք են՝ «Թուղթ Սահակայ առ Թէոդոս» և «Թուղթ Թէոդոսի առ Սահակ» (Մ. Խորենացի, III, ԾԷ):

Քաղաքում ենք Հայկ. ՍՍՌ Մ. տենդարանի «Տօնական»-ից (Ձեռ. 8382, թվկ. 1456, թղթ. 95 բ-1):

Ձեռագիր №342 (95 բ-1)

Պալագիր (Մ. Աբեգ. և Ս. Հարութ.)

1. «Թուլլի Սահակ Հայոց հայրա-
2. պետի առ բարեպաշտ և զն Թե-
3. օղոս*:
4. Քաղաքարի տեսնել իմոյ,
5. Թեոդոսի կայսեր ազատութիւն:
6. Ի ար խնդար
7. Կիսեմ զի համբաւ նեղու-
8. թեո մերոյ հասնալ է ի ներող
9. լսելիս ինքնակալիդ Սակա որոյ
10. յուսալով ի զթուի ըրեբա-
11. բութեզ, զիմեալ ապաւինե-
12. ցայ ի յոյսզ ձերս եւ ոչ հան-
13. զիպեցա ընդունելութե յի-
14. մում վիճակիս ի հրամանէ
15. վերակացուաց սորա: Այնչափ
16. ատեցեալ զմեզ մինչե զնշա-
17. նադիրս անգամ չընկալան:
18. զոր երեւ նոյն այր զոր առա-
19. բեցի առ ձեր բարեբարութիւդ:
20. բազմ անգամ ճշգրտեալ զո-
21. բա յասորոց աշխարհին: Արդ հաճոյ
22. թուեսցի ձերում աւերութեզ. ոչ
23. անիշխան առնել զմեզ ի մերում
24. վիճակիս. հրամայեա ընդունել
25. զմեզ և զվրդուիս մերս:
- 26.

Թուիր Սահակայ առ Թեոդոսի:

«Քաղաքարի կայսեր, տեսնել իմում
Ազատութիւն Թեոդոսի. Սահակ Հայոց
եպիսկոպոս, ի Տէր խնդար
«Կիսեմ, զի համբաւ նեղութեանս
մերոյ հասնալ է ի լսելիս ինքնա-
կալիդ. սակա որոյ յուսալով
ի զթափութիւն բարեբարութե-
թեանդ բոյ զիմեալ ապաւինե-
ցայ յոսա ձեր ե ոչ հանդիպե-
ցայ ընդունելութեան յիմում
վիճակիս ի հրամանէ վերա-
կացուացս սոցա: Այնչափ
ատեցեալ զմեզ մինչե զնշա-
նադիրս անգամ ոչ ընկալան,
զորս երեւ նոյն այր՝ զոր առա-
բեցի առ ձեր բարեբարութեանդ,
բազմ անգամ ճշգրտեալ զորա
յասորոց աշխարհին: Արդ՝ հաճոյ
թուեսցի աւերութեանդ ձերում
ոչ անիշխան առնել զմեզ ի
մերում վիճակիս, ե հրամայել
ընդունել զմեզ և զվրդու-
պետութեան մերս: Ողջ լերս:

* Ընդգծված բառերը կարծիք թանա-
քով են գրված:—Վ. Մ.—Ո.

* Մամոք. Կարեւոր այլ ընթերցվածներ
ըստ այս բն. հրա. 8. ԱՏ ի ներող լսողու-
թիւն ինքնակալիդ. 14. ԱՃԿ վերակացու-
աց. 15. Ա նոցա (որդիս սր. 24. de չիք և
Անկ հրամայեա:

Այս նորագոյն պատմութիւն ունի մի քանի ընտիր ընթերցվածներ,
որոնք քերականորեն ճիշտ լինելով, իմաստի պարզութիւնն են մտնում
տեքստի սեյ, ինչպես նաև ավելորդ անգամ հաստատում են այն, որ հին
տեքստերը հաճախ գիտակցաբար և անգիտակցաբար աղճատվել են գրիչ-
ներին—«խմբագրողներին» կողմից:

Դրանք են.

1. Ձեռ.—«Քաղաքարի» բառը գրչի սխալ է լին. խաղաղարարի.—«Քա-
ղաքար—խաղ՝ կատակ անող—անիմաստ է և անվայել բյուզանդական կայս-
րին ուղղած մի այդպիսի պաշտոնական թղթի մեջ: Պետք է լիներ՝ «խա-
ղաղարարի»—«խաղաղութիւնն առաջ բերող, խաղաղութիւնն ձգող» (Ստ.
Մալխասյան, Հայ. բաց. բառ.):

2. Ձեռ.—«Ի ներող լսելիս».—Քնն. հրա. ունի սոսկ «ի լսելիս», իսկ
ծանոթ. մեջ՝ ԱՏ ի ներող լսողութիւն [վա լսելութիւն, с լսողութիւնդ].—
Մ. Էմինը թարգմանում է «до снисходительного слуха». Ստ. Մալխաս-

յանը՝ «լսողության» և այլն¹։ Ձեռ. տվյալն ավելի վաղերու է և պատշաճ նման աղերսագրերի ողուն։ Մ. Էմինը ճիշտ է հասկացել և թարգմանել։

3. Ձեռ.—«գթութիւն»—Քնն. հրտ. «գթածութիւն»։

4. Ձեռ.—«ի յոյսդ ձեր»—Քնն. հրտ. «յոտս ձեր»։ Մեր ձեռքը հասած բոլոր ձեռագիր օրինակների մեջ «յոտս» է։ Թարգմանիչներն այդ իմաստով էլ թարգմանել են։ Միայն այս ձեռագիր պատահիկն է, որ ունի «ի յոյսդ»։ Արդյոք, սա զրչի՞ սխալ է, թե՞ նախնական ձեռն է կրկնաբանությամբ... «յոուարով... ապաւինեցայ ի յոյսդ ձեր»։

5. Ձեռ. — «եւ ոչ հանդիպեցա ընդունելութե յիմում վիճակիս. և հրամանէ վերակացուաց սորա»—Քնն. հրտ. «վերակացուաց սոցա» [ձան. opqrs սր. փխ. սոցա]։ «Սորա» դերանունը վերաբերում է «վիճակիս» բանին, ապա ուրեմն եղակի առումով պիտի եղած լինի՝ «սորա» և ոչ թե հոգնակի՝ «սոցա»։—Մ. Էմինը ճիշտ է հասկացել ու թարգմանել՝ «я не нашел приема в жребии моем, благодаря приказанию его правителей», իսկ Ստ. Մալխոսյանը բավականաչափ ազատ է թարգմանում՝ «բայց իմ վիճակում ընդունելություն չգտա այստեղի (ընդգծումներն իմն են—Վ. Մ.—Օ.) վերակացուների հրամանով»։

6. Ձեռ.—«հրամայեա»—Քնն. հրա. «հրամայել» [ձան. Առիկ հրամայեա]։—Այդպես էլ հասկացել է Ստ. Մալխոսյանը, թարգմանելով հրամայեցեք, բայց ինչու հոգնակի ձևով, ինչպես և «ոգջ եղեք», մինչդեռ մյուս թղթերի մեջ մեր ալեգորիկ հայկարանը ճիշտ է թարգմանում՝ «ոգջ եղիք»... Ի դեպ, քննությանս առարկա հատվածը նա բավականաչափ ազատ է թարգմանել, անդամ տեղ-տեղ թարգմանության փոխարեն բովանդակությունը հարստել։

7. Ինչպես մեր ձեռագրի, այնպես էլ մյուս բոլոր զրչադիր ու տպագիր օրինակների՝ «գորս» (=դնշանագիրսն) եքեր նորն այր՝ զոռ առաքեցի առ ձեր բարերարութիւնդ, բաղում անդամ ճշմեալ զորա յԱսորոց աշխարհին» պարբերության մեջ, մեզ թվում է, թե ընդգծածս «երեր» բայն աղճատ զրչության արդյունք է, որ առաջ է եկել միջին երկաթագրի եղծված եզրիտ» բայից։ Այլուր Մ. Քորենացին հենց նույն այդ իմաստով գործ է ածում «եստեղծ», «սանդծ» բայը (III, ԾԳ, ԾԵ)՝ «եզիտ»։

Եւ իրոք, այդ աղճատ բառի պատճառով բոլոր թարգմանիչները հարկ են համարել յուրովի իմաստավորել այդ խոսքը, զիմելով հաճախ այս կամ այն բացատրությանը և հարասելով Քորենացու հակերճ ոճը։ Օրինակ՝ Մ. Էմինը թարգմանում է՝ «... не приняты даже (наших) писммен принесенных тем же мужем, которого я отпирания к тебе, благодетелю: не мало приходилось переносить ему трудностей и в стране Сирийской»։ Իսկ Ստ. Մալխոսյանը՝ «... մինչև իսկ չընդունեցին այն նշանագիրները, որ բերել էր նույն այս մարդը, որին ուղարկեցի ձեր բարերարության մոտ. (այդ նշանագիրները) նա գտել էր երկարատև դառն աշխատանքով Ասորոց աշխարհում»։

Եթե վերականգնելու լինենք տեքստը «երեր»-ի փխ. զնելով «եզիտ»,

¹ «История Армении Моисея Хоренского», посмертное изд., перевод Н. О. Эммина, Москва, 1893.

«Մովսես Քորենացի»՝ Նայց պատմություն, թրգմ. Ստ. Մալխոսյան. Երևան, 1940. Հոգվածս չժանրաբանելու համար մենք հետազոտում էլ զպայակոչելու ենք միայն այս երկու կարևոր թարգմանությունները։

տեքստի միաժամ էլ սլարգ կլինի և կազատվի ավելորդ բացատրական բառերից, այն է՝ «մինչև իսկ չընդունեցին այն նշանագիրները, որ նույն մարզը, որին ուղարկեցի ձեր բարերարության մոտ, գտել էր շատ անգամ ճգնելով (կամ աշխատանք թափելով)՝ Ասորոց աշխարհում»:

Երկրորդ հատված

Այս հատվածը քաղում եմ Հայկ. ՍՍԻ Մատենադարանի «Ճառնատիր» մատյանից (Ձեռ. 1525, թվկ. ԺԴ դարի վերջը կամ ամենաուշը ԺԴ դարի սկիզբը, թղթ 114 ր-2 և 115 ա-1): Ծանոթությունների մեջ տալիս եմ վերը հիշված Ձեռ. 8382 (թվկ. 1456, թղթ 95 ր-1 և 95 ր-2) կարևոր ընթերցվածները:

Ձեռագիր (114 ր-2)

1. Թուղթ սրբոյն Ստեփան առ
2. Թեոփոս թաղաւոր*:
3. Ինքնակալ Թեոփոս** աւգոս-
4. տոս և կայսր Հռոմայեցւոց
5. մեծի Սահակա եպիսկոպոսապետի
6. Հայոց խնդալ:
7. Հրամայեալ մեր տեսանել
8. զթուղթս, վերահասու եղեաք զրե-
9. յոցս առ ի քէն. նւ մեղադիր եղե-
10. աք յոյժ զի ամենայն որաիւ միանե-
11. ցեր զհետ հեթանոս թաղաւորի:
12. Նւ մեզ եւ ոչ թղթով բաւակա-
13. նացար ծանօթանալ Նւ առա-
14. լել յայտմ մեղադիր եմք. զի ար-
15. համարենալ զմեր ճարտարաբա-
16. սը ի մերում յայլաքիս, յասորոց
17. ոմանց խնդրեցեր զիմաստից
18. զիւտս Վասն որոյ հաճեալ եաք
19. ընդ մերոց ծառայիցդ արհա-
20. մարհել զայլաքիս ուսումն:
21. Եւ այց զի յետոյ պատմեաց մեզ
22. Մեսրոպ եթէ կատարումն (թղթ
23. 115 ա-1) արուեստիցդ ի շնորհաց
24. վերնայն եղև. զրեցաք զի ամե-
25. նայն փութով ուսցին. նւ
26. զքեզ պատուով լնդունել:
27. որպէս զարդարել վարդապետ

* Վերնագիրը չի համապատասխանում բովանդակությանը: Երոստ սույն վերնագիրը գրելուց հետո ռեալմամբ բաց է թողել Սահակի Թուղթը և արագորեւ է Թեոփոսի Թուղթը Սահակ հայրապետին: Այդ պարզ երևում է նաև Ձեռ. 8382-ից, որտեղ այս Թուղթ Թեոփոսի թաղաւորի առ Սահակ եպիսկոպոսապետ Հայոց-ին նախորդում է վերը բերված Թուղթ Սուհակա... առ... թղթ Թեոփոս:

** Ծանոթ. 3. Թեոփոս: 4. Հռոմայեցւոց: 5. եպիս

Ձեռագիր (Մ. Աբեղ. եւ Ս. Հարութ.)

Թուղթ Թեոփոսի առ Սահակ
 Ինքնակալ Թեոփոս Աւգոստոս և կայսր Հռոմայեցւոց.
 մեծի Սահակա եպիսկոպոսի
 Հայոց խնդալ:
 Հրամայեալ մեր տեսանել
 զթուղթս՝ վերահասու եղաք զրե-
 լոցս առ ի քէն. և մեղադրեցաք
 յոյժ, զի ամենայն որաիւ միանե-
 ցար զհետ հեթանոս թաղաւորաց,
 և մեզ և ոչ թղթով բաւակառա-
 ցար ծանօթանալ Նւ առա-
 լել յայտմ մեղադիր եմք. զի ար-
 համարենալ զճարտարոբա, որ
 ի մերում քալաքիս՝ յԱսորեաց
 ոմանց խնդրեցեր զիմաստից
 զիւտս Վասն որոյ հաճեալ էաք
 ընդ մերոց ծառայիցդ արհա-
 մարհել զայլաքիս ուսումն:
 Եւ այց զի յետոյ պատմեաց մեզ
 Մեսրոպ, եթէ կատարումն
 արուեստիդ ի շնորհաց
 վերնայն եղև՝ զրեցաք զի ամե-
 նայն փութով ուսցին. և
 զքեզ պատուեալ ընկալցին
 որպէս զարդարել վարդապետ

28. իւրեանց հանգոյն արքեպիս-	իւրեանց, հանգոյն արքեպիս-
29. կոպոսին Կեսարու: և:	կոպոսին Կեսարու:)
30. դպրոցք կարգեցին յամենայն	
31. իշխանութեան մերում. բազմու-	
32. թիւնք մանկտուց ժողովել, և:	
33. դարմանք և ծախք յարքունուստ	և
34. եղիցին:	դարմանք և ծախք յարքունուստ
35. և հրամայեցաք քաղաք շինել	եղիցին:
36. յաշխարհիդ Հայոց յապաւինութիւն	և հրամայեցաք քաղաք շինել
37. ձեզ և դարաց մերոց: Եւ միք վասն	յաշխարհիդ Հայոց՝ յապաւինութիւն
38. քո արարաք ստրաւելատ զՎար-	ձեզ և մերոց դորացդ: Եւ վասն
39. դան որդիացեալդ քո: Եւ	քո արարաք ստրաւելատ զՎար-
40. յառաջին վարդապետսն գրե-	դան որդի որդիացելոյ քոյ, և
41. ցաք զՄեսրոբ: Ողջ լերն:	յառաջին վարդապետսն գրե-
	ցաք զՄեսրոպ: Ողջ լերն:
Մանոք. 8. եղաք դրելոցն.	Մանոք. 9. յԵՈԵԿԵԼԱՔ. 10. վ- կ միան-
9. Եղաք. 15. ճարարովքս.	ցել. 18. de opqrs դիւտ. 18. շ: հա-
20. գալսպիսի. 22. Մեսրովք.	ճեալ Եաք. 22. de fl մեսրոք. 23.
24. դիտացուցաք. 27. արդարեւ.	opqrs արուեստիցդ. 36. ՏՆ պատ-
31. բազմութիւն մանկտուց. 37. մե-	ուով. 39. ԵԿ չիք՝ որդի: 42. զվարդան գոր-
րոց դաւրաց. 37. չիք՝ մեր. 38. ստրա-	դիացեալ քոյ: 4. որդիացելոյ քո:
ւելատ. 41. զՄեսրովք:	1) «Կեսարուս ճառից հետո եկող՝ «Եւ
	դպրոցք... ժողովել» բառերը մինչ այժմ
	հայտնի չըլլաղիւ ու ապագիւր օրինակնե-
	րի մեջ հապաված են:

1. Ձեռ.—«... զի ամենայն սրտիւ միտեցեր զհետ հեթանոս թաղաւորիս—Դնն. հրտ. «... զի ամենայն սրտիւ միտեցար (Մանոք. վ²kl միտեցեր) զհետ հեթանոս թաղաւորաց [Մանոք. ՏՆ թաղաւորի (1 թաղաւորին)]:—Հեթանոս թաղաւոր ասելով՝ գրերի գյուտի ժամանակ հասկանում են միայն Սասանյան Պարսկաստանի արքայից արքա Հազկերտ 1 (399—420), Ասորիքը, Միջագետքի մեծ մասը 363 թ. խայտառակ դաշնագրով անցել էին Սասանյան Պարսկաստանին: Մաշտոցն էլ այդ ժամանակ Պարսկաստանի զերիշխանութեան ներքո գտնվող «յԱսորոց աշխարհին» է հորինում հայոց գրերը: Մ. էմինը հասկացել է հենց այդ իմաստով և ճիշտ թարգմանել է «предался языческому царю», մինչդեռ Մտ. Մալխասյանը «միտեցիր հեթանոս թաղաւորների կողմը».—Պետք է թողնել եզակի առումը:

2. Ձեռ.—«... գրեցաք զի ամենայն փութով ուսցին: և գրեզ պատուով ընդունել, որպէս զարդարեւ վարդապետ իւրեանց, հանգոյն արքեպիսկոպոսին Կեսարու: և դպրոցք կարգեցին յամենայն իշխանութեան մերում, բազմութիւնք մանկտուց ժողովել, և դարմանք և ծախք յարքունուստ եղիցին»:
—Դնն. հրտ.—«... գրեցաք զի ամենայն փութով ուսցին և ոսկս պատուեալ ընկալցին որպէս զարդարեւ վարդապետ իւրեանց, հանգոյն արքեպիսկոպոսին Կեսարու: և դարմանք և ծախք յարքունուստ եղիցին»:

Ընդգծած բառերը չկան մյուս տպագիր և զըջագիր (բացի Մատենադարանի ցարդ աչքի ածած Ձեռ. 8382—տես բաղդատությունը) օրինակների մեջ: Աղճատ տպագիր տեքստերը հիմք են ծառայել նաև սխալ, բայց իմաստի անհեթեթ, թարգմանությունների: Մեջ ենք բերում մեր երկու անվանի հայկաբանների թարգմանությունները: Երանք՝ կասկածի տակ չառնելով տպագիր տեքստը, ամենայն հանգստութեամբ թարգմանել են այն և չեն

տարակուսել, որ մեղանչում են պատմական բացահայտ իրականության դեմ: Դուրս է դալիս, որ Լուսավորչի տոհմի այնքան ընչազուրկ է, տնանկ ու խեղճ, որ նրա սնունդն ու ծախսերը պետք է բյուզանդական արքունիքը հոգարի (եթև նուշիսկ հայ կաթողիկոսը չքավոր լիներ, ապա էլ ինչացու էր հայ արքունիքը, այն էլ Վոսմշապուհի նման մի լուսամիտ թագավորի օրոք, որ կաթողիկոսը նպաստ ստանար օտար, բյուզանդական կայսրի...): Եթև այդ հատվածի տեքստը նուշիսկ աղճատ չեն համարել, սովյալներ չունենալով իրենց տրամադրության տակ, այնուամենայնիվ մեր անվանի թարգմանիչներն իրենց կասկածը հայտնաձ պիտի լինեին ծանոթությունների կարգով դրանց բովանդակության անհեթեթության մասին, որպեսզի այդ ուղղությամբ պրպտուժներ կատարվեն, մանավանդ որ նրանք շատ լավ գիտեին, որ թագավորից հետո Լուսավորչի տոհմը Հայաստանի ամենահարուստ կալվածատեր-ֆեոդալների թվին է պատկանել:

Արդ՝ Մ. էմինը այդ հատվածը թարգմանում է՝ «... мы предписали, чтобы все неотложно обучались ему, принимали бы тебя, как истинного своего учителя, наравне с кесарийским епископом с честью, и чтобы содержание стола вашего (?Մ.-Ս.) и издержки шли от казны».

Սու. Մալխասյանը նոր երանդ է տալիս այդ հատվածին, ցանկանալով որ Սահակ կաթողիկոսին Կեսարիայի արքեպիսկոպոսի նման արքունիքից սնունդ ու ծախսեր տրվեն: Իհրում ենք թարգմանությունը բառացի.

«Մենք գրեցինք, որ ամենայն փռեթանությունամբ սովորեն, և քեզ պատվով ընդունեն իրենց իսկական ուսուցիչը, Կեսարիայի արքեպիսկոպոսի նման սնունդն ու ծախսերը արքունիքից տրվեն»:

Այդ պարբերությունը պետք է թարգմանել.

«Մենք գրեցինք, որ ամենայն հոգատարությամբ սովորեն, և քեզ պատվով ընդունեն, իրենց իսկական ուսուցիչը հար և նման Կեսարիայի արքեպիսկոպոսին, և մեր ամբողջ իշխանության մեջ զպրոցներ կարգի դնեն (հաստատեն), բաղձաթիվ մանուկներ ժողովեն և սնունդն ու ծախսերը արքունիքից լինեն»:

Միտքը պարզ է: Սահակ Պարթևը չէ, որ իր սեղանի պարենն ու ծախսերը բյուզանդական արքունիքից է ակնկալում, այլ ի տրիտուր քաղաքական կոմպրոմիսի (տե՛ս տեքստի հետևյալ նախադասությունը) թեոդոս խոստանում է Հունահայաստանում բացվող զպրոցների ծախսերը և այդ զպրոցներում սովորող մանուկներին սնունդը հոգալ բյուզանդական արքունիքից:

3. Հետևյալ նախադասությունը (Ձեռ.—«Եւ մեր վասն քո արարաք ստրատեղատ զՎարդան որդիացեալդ քո» կամ՝ Քնն. հրտ.—«Եւ վասն քո արարաք ստրատեղատ զՎարդան որդի որդիացելոյ քոյ») կարելի է հասկանալ և ըստ Մ. էմինի՝ «тобою усыновленного» (մեր Ձեռ. համեմատ), և ըստ Սու. Մալխասյանի՝ «քեզ որդեացածի (փեսայի) որդուն» (Քնն. հրտ. համաձայն): Երկուսն էլ ճիշտ են: Հարց է առաջանում՝ որն է նախնականը— Այդ էլ կը պարզվի խորենացու Պատմության հնագույն օրինակը հայտարարելուց հետո, եթև երբեիցե երևան գա այդպիսին:

Ահա այս բանասիրական մանրունքն է, որ առաջարկում ենք մեր հայագետների ուշադրությանը:

Մեր պատմական անցյալի կուլտուրական-գրական ամեն մի բեկորիկ

պետք է արժեքավորվի ըստ նրա նշանակության: Երբեք չպետք է աչքաթող անել նույնիսկ մի էջանոց պատառիկ, մանավանդ եթե դա քաղված է մեր անվանի հեղինակների երկերից և եթե այս վերջինս երկասիրությունները պատրաստվում են ակադեմիկ հրատարակությամբ լույս ընծայվելու: Հակառակ դեպքում Սահակ Պարթևի նման ականավոր հայ կաթողիկոսը հանդես կգա սեղանորդի (нахлебник) դերում: